Լենինականի կոմկուսը գրում է Երեւան: Երեւանի կոմկուսը դիմում է Կ. Կ.ին. Կ. Կ.ն գրում է Լենինական. Լենինականը գրում է մոտաւոր դիւղը. ասենք, Ղուրդ–Օղլու, Կոմերիմամիութեան: Կոմերիմամիութիւնը որոշում է միջոցներ ձեռք առնել. «մի քիչ հուպ տալ»: Ղրկում են աւանակի մէկը: Աւանակը գալիս կանգնում է Որբերի Գիւղի ծայրում, մի քանի հոգի կանչում, փսփսում, խոստումներ անում, արձանագրում, պաշտօններ բաշխում եւ հեռանում:

— Ուզում են ինձ հեռացնել, որովհետեւ ազգային զգացում եմ տարածում,— ասում է փոքրիկ, մաշուած, նիհարցած մի մարդ, որ ուսուցիչ է այստեղ: —Տղաները ինձ դէմ են հանել, բայց ամերիկացիները հասկացել են, պինդ են բռնում:

Խեղճութիւն...

Նախկին ցարական պաշտօնեան չլսել է ձեւացնում եւ, վարիչի յետեւից վազելով, հիանում է, ոգեւորւում եւ կոտրտուած ֆրանսերէնով իր յարգանքները յայտնում:

Նայում եմ շուրջս, մտածում. մարդ ուժ ունենայ, այս տղաքը ժողովի, աւազակախումբ կազմի, եւ լեռ բարձրանայ: Լեռ չկայ, թալանելու էլ տեղ չկայ ու վրէժը ումնի՞ց առնես...

Որբերի Գիւղի մասին շատ էի կարդացել: Դա՞ է նոր կեանքը, դա՞ է Հայաստանը...

* * *

Ահա պիտի մեկնենք: Մի քիչ յետոյ, գանդը պիտի տան, «գիւղը» սեղանատան մէջ պիտի ժողովի եւ խաչած գետնախնձոր կամ լուբիա պիտի ուտի: Պիտի քաշուին տները, մէկ մէկից զզուած պիտի նստին, երես երեսի նային, յօրանջեն: Պիտի պառկին եւ մէկ կողմից միւսը դառնալով, ժամեր, ժամեր պիտի հառաչեն, օ՜խ քաշեն, վա՜յ քաշեն:

Միւս օրը, բորոգանը պիտի նուագէ, պիտի նորից վեր կենան, անկողին չմնան...

Եթէ լաւ խորհենք, որբերի այս կեանքը մի տեսակ իդէալ է, որ մեր իմաստակները ուզում են ընդհանրացնել ու տարածել ամբողջ աշխարհի վրայ:

Նախ, ամէն մարդ պէտք է մտածէ միակերպ: Պատմական մատերիալիզմը միակ ճշմարտութիւնն է եւ ուրիշ ճշմարտութիւն չկայ: Անցած եւ գալիք փիլիսոփայութիւնները, գիտութիւնը եւ կրօնքը, ոչ միայն սխալ են, այլ նաեւ դատապարտելի:

Մարդկութիւնը բաժանւում է երկու մասի՝ քաղաքացիներ եւ ընկերներ:

Քաղաքացիները պարտաւոր են որեւէ պրոֆիմիութեան անդամ լինել, թէ չէ մարդ չեն, բոլոր իրաւունքներից զրկուած են եւ ընկերութեան մաս չեն կազմում: Կանոնաւոր կերպով պէտք է յաճախեն ժողովները, թերթ ստանան, ծափահարեն իշխանութեան առած բոլոր քայլերին, կօոպերատիվներից ապրանք գնեն, չքերթներին մասնակցին եւ Գործկոմի նախագահի առջեւից անցնելու ժամանակ հուռա՛ պոռան:

Ընկերները կուսակցութեան անդամ են: Մարքսիզի մասին գրած բրոշիւրներին ծանօթ: Ժողովներ: Կարգապահութիւն: Իրաւունք ունին ատրճանակ կրելու: Պարտաւոր են իշխանութեան գաղափարախօսութեան դէմ մեղանչողներին լրտեսել: Մատնութիւնը՝ քաջագործութիւն է: Լաւ պաշտօններ, ռոճիկ: Միշտ Կ. Կ.ի տրամադրութեան տակ են: Շաբաթը մի անգամ հրացանը ուսերին՝ մարզանք: Մէկ մէկին եւս լրտեսել: Ճառեր արտասանել: «Դուք այս երկրի տէրն էք»:

Եւ ընկերային կեանքը ժամացոյցի նման լարուած է:

Կազմակերպութիւններ: Գիտութիւնը եւ առհասարակ միտքը, հաւերի պէս վանդակների մէջ փակուած են: Աւեւտուրը կազմակերպուած: Բանաստեղծութիւնը եւ գրականութիւնը պէտք է ծառայեն պրոլետարիատին: Զգացումները՝ շղթայուած: Ոգեւորութիւնը՝ չափաւոր եւ պատճառաբանուած: Դեղօրայքը ձրի եւ հիւանդութիւնը՝ առատ:

Զանգը տալիս են, «գիւղը» ժողովւում է սեղանատուն:

— Մենք յոգնա՛ծ ենք որբ լինելուց:

* * *

Վեց դարուց ի վեր մենք որբ ենք:

Մեր հոգեբանութիւնը՝ քրիստոնեայ աշխարհը ե՞րբ պիտի դայ, Ինկիլիզը ե՞րբ պիտի դայ, Ֆրանկը ե՞րբ պիտի դայ... Եւրոպա՜ն, Եւրոպա՜ն...

Այսօր՝ կարմիր Մոսկուան:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան